Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՕՖԵԼՅԱ ԶԱՔԱՐՅԱՆԻ Ք. ՊԵԿԻՆ (ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.

Օֆելյա Զաքարյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, ք. Պեկին, 4-11 դեկտեմբերի, 2023 թվական

4. Հրավիրող կողմը.

ՉԺՀ կրթության նախարարության լեզուների փոխանակման և համագործակցության միջազգային կենտրոն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Չինարենի միջազգային առաջին համաժողովին

6. Քննարկված թեմաները.

- Չինարենի տարածման նպատակով հնարավորությունների զարգացումը,
- Չինարեն դասավանդող մասնագետների վերապատրաստման ծրագրերը,
- Չինարենի որակավորման քննությունների (HSK, HSKK) նոր չափանիշների հաստատումը,
- Չինագիտության զարգացման հնարավորությունները,
- ՉԺՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթաթոշակային ծրագրերը,
- Չինագիտության ոլորտում ակադեմիական ծրագրերը,
- Կոնֆուցիուսի ինստիտուտների գործունեությունը և կարևորությունը,
- Չինարենի մշակութային ծրագրերը, մասնավորապես, «Չինական կամուրջ» ծրագիրը,

- ՀՀ-ում չինարենի դասավանդմանն ու տարածմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը,
- ՀՀ-ում գործող Կոնֆուցիուսի ինստիտուտի գործունեությունը,
- ՉԺՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցության հեռանկարները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում մասնակցել եմ Չինարենի միջազգային առաջին համաժողովին, ինչպես նաև վերջինիս շրջանակներում կազմակերպված պանելային քննարկումներին: Համաժողովի ընթացքում ներկայացվեցին չինարենի տարածմանն ուղղված միջոցառումները և այդ ոլորտում տարբեր երկրների հաջողված փորձը: Մասնավորապես, ներկայացվեց տարբեր երկրներում գործող ավելի քան 492 Կոնֆուցիուսի ինստիտուտների կողմից իրականացվող գործունեությունը, այն է՝ չինարենի դասավանդման նյութերի տարածումը, չինարեն դասավանդող մասնագետների վերապատրաստումները, մշակութային միջոցառումների (օրինակ՝ «Չինական կամուրջ»-ը, որին 2022 թվականին 126 երկրներից ավելի քան 105 000 ուսանողներ են մասնակցել, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից), ամառային դպրոցների կազմակերպումը, «Չինարենի միջազգային օր»-ը, որը արդեն երրորդ տարին անցկացվում է ապրիլի 20-ին, և որի շրջանակներում ավելի քան 1000 միջոցառում է անցկացվել՝ ներգրավելով 105 երկրներից 150 միլիոն մասնակցի, չինարենի որակավորման քննությունների (HSK, HSKK) անցկացումը, որոնք կազմակերպվում են նաև Հայաստանի Հանրապետությունում Կոնֆուցիուսի ինստիտուտի կողմից և հնարավորություն են տալիս դիմել ՉԺՀ կրթաթոշակային ծրագրերին:

Համաժողովի ընթացքում մասնակցել եմ նաև չինարենի որակավորման քննությունների (HSK, HSKK) նոր չափանիշների վերաբերյալ նիստին, որի ընթացքում ներկայացվեցին որակավորման քննությունների՝ նախկին վեցի փոխարեն՝ ներկայումս ինը մակարդակներին ներկայացվող նոր չափանիշները, ինչպես նաև տրվեց չինարենի որակավորման քննությունների էլեկտրոնային հարթակի նոր տարբերակի՝ www.chinesetest.cn պաշտոնական մեկնարկը:

Համաժողովի պանելային քննարկումների ընթացքում մասնակցել եմ նաև բարձրագույն կրթության լեզվական կրթության ոլորտում համագործակցության և միջազգային ուսանողների փոխանակման ծրագրերի մասին նիստին, ինչպես նաև «Գոտի և

ճանապարհ» նախաձեռնության մասնակից երկրների միջև կրթության և գիտության ոլորտում համագործակցության զարգացման հեռանկարների վերաբերյալ նիստին:

Համաժողովի շրջանակներում մասնակցել եմ ՉԺՀ և օտարերկրյա համալսարանների միջև համագործակցության զարգացման վերաբերյալ նիստին, որի ընթացքում զեկույցով հանդես եկան Թաիլանդի Թագավորության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Լաոսի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետության, Տաջիկստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները:

Համաժողովի ընթացքում մասնակցել եմ նաև ՉԺՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ցուցահանդեսին, որին ՉԺՀ Ցինհուայի, Պեկինի, Թիենծինի, Չոնցինի, Շանհայի և այլ լավագույն համալսարաններ ներկայացրին իրենց կրթական ծրագրերը, միջազգային ուսանողների համար կրթաթոշակային ծրագրերը:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Չինարենի միջազգային առաջին համաժողովի շրջանակներում կարևորվել է չինարենի ուսուցման, տարածման, չինարենի որակավորման քննություններին ուսանողների մասնակցության, չինարենի դասավանդման նյութերի տարածման, չինարեն դասավանդող մասնագետների վերապատրաստումների կազմակերպման, կրթաթոշակային ծրագրերին մասնակցության խթանումը:

Համաժողովի ընթացքում կազմակերպված՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ցուցահանդեսի շրջանակներում հանդիպումներ եմ ունեցել ՉԺՀ բաձրագույն ուսումնական հաստատությունների, մասնավորապես՝ Պեկինի համալսարանի, Թիենծինի համալսարանի, Շանհայի համալսարանի, Չինաստանի գիտության և տեխնոլոգիաների համալսարանի, Չինաստանի էլեկտրական գիտության և տեխնոլոգիաների համալսարանի, Չոնցինի նորմալ համալսարանի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության հնարավորությունները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Չինարենի միջազգային առաջին համաժողովի ընթացքում կազմակերպված՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ցուցահանդեսի շրջանակներում ՉԺՀ բաձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ տեղի ունեցած հանդիպումների ընթացքում առաջարկվել է քննարկել և նպատակահարմարության

դեպքում նախատեսել բարձրագույն կրթության և գիտության ոլորտում երկկողմ համագործակցություն:

14 դեկտեմբերի, 2023 թվական

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ՝ ՕՖԵԼՅԱ ԶԱՔԱՐՅԱՆ